ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 294
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի *ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Զովունի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Նաիրի համայնքի (Զովունի բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Զովունի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի (Զովունի բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-029-0215-0128 կադաստրային ծածկագրով 0,12884 հա մակերեսովգյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	07-029-0215-0128 կադաստրային ծածկագրով 0,12884 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զովունի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «11» «սեպտեմբերի» 2025 թ.